

դուռն սրբոյն Սարգսի հետ մեծին Ղուկասու, որ յար եւ նման էր սրբոց հայրապետացն աստուածաբանութեամբ եւ սրբութեամբ լի»): Կեսարացի զասոնք հետն առած՝ Կ.Պոլիս եկաւ կռուելու, որ միջոցին Դարանաղցի Պրուսայի կողմերը կը գտնուէր: Յովհ. Խուլ փութաց Էտիրնէ, ուր կայսրը ձմեռելու գացած էր, ընդդէմ Կեսարացւոյն բողոքելու համար: Յաջորդ տարին 1613ին կայսրը Պոլիս դարձաւ, եւ Կեսարացին ու Խուլը շատ դիմուհներ ընելէն ետեւ արքունիք, վերջապէս յաղթահարեցաւ Կեսարացին: Չաւուշներ դուրս հանեցին Կեսարացին, կաթողիկոսն եւ երկու Մինասները եւ իրենց տեղը ղըկեցին, 25 Մայիս 1613ին, որ օրը Դարանաղցին Սկիւտարի վրայէն Պոլիս մտաւ:

Այն ատեն նոր ժողովք գումարեցին քահանայք եւ իշխանք եւ Չաքարիային ըսին, որ այսուհետեւ Յովհ. Խուլ նստի իբրեւ գլխաւոր Պատրիարք Կ.Պոլսի աթոռը (Ստամպոլ), վասն զի ասիկայ տեղացի է եւ հանդարտ մարդ, զոր յօժարութեամբ յանձն առաւ Չաքարէ: Պէրաթը Խուլին վրայ գրել տուին, իսկ միւս երկուքն իբրեւ անոր ընկերքը. ուստի Պէրաթ մը եւ երկու Էմիրնամէ հանել տուին, եւ իշխանութիւնը բաժնեցին հետեւեալ կերպով. Ղալաթիան եւ Ռումէլին Դարանաղցոյ տուին. Սկիւտար եւ Անատոլու «փարաքանդան», Չաքարին. իսկ Ստամպոլ Սերաստիայէն վեր մինչեւ Կաֆա եւ Քոթիան (Քէօթահա) Յովհան-